**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ**

---

# ՈՐՈՇՈՒՄ

« 08 » « նոյեմբերի » 2023թ. ՆՄՈ/ 725 -Ա

ք.Արմավիր

## *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 30-Ի N ՄՈ/376-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 34-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի մարտի 2-ի N269-Ն որոշման պահանջները և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի «Կամավոր ատեստավորման անցած մանկավարժական աշխատողների ցուցակները՝ ըստ ցուցաբերած արդյունքների, հաստատելու մասին» 2023 թվականի հունիսի 6-ի N 843-Ա/2 հրամանը , հաշվի առնելով 2023 մայիսի 1-ի դրությամբ և 2023-2024 ուսումնական տարվա սկզբի դրությամբ կամավոր ատեստավորված մանկավարժների փաստացի ծանրաբեռնվածությունը՝*

### *ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝*

1. *Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2023 թվականի օգոստոսի 30-ի «Դրամաշնորհ հատկացնելու մասին» N ՄՈ/376-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝*

1) *որոշման 1-ին կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.*

2) «1. Հայաստանի Հանրապետության 2023 թվականին պետական բյուջեից Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմին

0901 ք. Արմավիր, Աբովյան -71, Հեռ.՝ 0237/2-37-16, Ֆաքս 010/28-06-46, Էլ. փոստ armavir.qartughar@mta.gov.am

«Արտադպրոցական դաստիարակության ծրագիր» ծրագրով տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված 1 985 500 (մեկ միլիոն ինը հարյուր ութսունհինգ հազար հինգ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ գումարից 1 925 600 (մեկ միլիոն ինը հարյուր քսանհինգ հազար վեց հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ գումարը վերաբաշխել՝ համաձայն հավելվածի:».

3) *որոշման 1-ին կետով հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի.*

4) *որոշման 2-րդ կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.*

*«2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի գլխավոր ֆինանսիստ՝ Ա.Հովհաննիսյանին արտադպրոցական դաստիարակության ծրագրով նախկինում կնքված պայմանագրերում կատարել համապատասխան փոփոխություններ:»:*

2. *Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:*

11/8/2023

X

VERIFIED OCSP 11/8/2023 17:57:33 GMT+4

Подписано: HOVHANNISYAN EDVARD 2001830505

**ՄԱՐԶՊԵՏ՝**

**Է.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

0901 ք. Արմավիր, Աբովյան -71, Հեռ.՝ 0237/2-37-16, Ֆաքս 010/28-06-46, էլ. փոստ armavir.qartughar@mta.gov.am

*Հավելված*
*Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի*
*2023 թվականի նոյեմբերի 08-ի*
*ՆՄՌ/ 723 -Ա որոշման*

*<<Հավելված*

*Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի*

*2023 թվականի օգոստոսի 30-ի*
*ՆՄՌ/376-Ա որոշման*

ՑԱՆԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻՆ <<ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ>> ԾՐԱԳՐՈՎ <<ԱՅԼ ՆՊԱՍՏՆԵՐ ԲՅՈՒՋԵԻՑ>> ՀՈԴՎԱԾՈՎ

2023 ԹՎԱԿԱՆԻՆ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՒՄԱՐԻ ՎԵՐԱԲԱՇԽՄԱՆ

*Հազար դրամ*

| h/h | Համայնքի անվանումը | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | Տարի |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1 | Վաղարշապատի համայնքապետարանի «Մակար Եկմալյանի անվան թիվ 1 երաժշտական դպրոց» ՀՈԱԿ | | | | 644.8 |
| 2 | Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Շառլ Անզնավուրի անվան արվեստի դպրոց» ՀՈԱԿ | | | | 622.5 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 3 | Փարաքարի Հովիկ Էդգարյանի անվան արվեստի դպրոց» ՀՈԱԿ | | | | 658.2 |
| . | **ԸՆԴԱՄԵՆԸ** | | | | 1925.6 |

>>:

***ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝*** ***Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ***

Недействительная подпись

X

VERIFIED OCSP 08.11.2023 16:48:42 GMT+4

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023